Հավելված N 2
ՀՀ կառավարության 2024 թվականի
հունիսի 20-ի N 956 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԳՈՒՅՔԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԱՌԱՆՁԻՆ ՏԵՍԱԿԻ ԳՈՒՅՔԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ԵՂԱՆԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ «ՊԵՏԱԿԱՆ ԱՐԱՐՈՂԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների՝ պետական սեփականություն դարձած նվերների տնօրինման եղանակների մեթոդաբանությունը, առանձին տեսակի գույքի տնօրինման առանձնահատկությունները, Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության պետական արարողակարգի ծառայության (այսուհետ՝ ծառայություն) կողմից տրվող եզրակացության ներկայացման կարգը:

2. Գույքի տնօրինման եղանակի ընտրությունն իրականացվում է սույն հավելվածով սահմանվող մեթոդաբանությամբ՝ սույն որոշման N 1 հավելվածով սահմանված դեպքերում հիմք ընդունելով լիազոր մարմնի կողմից տրված մասնագիտական խորհրդատվությունը, իսկ «Պետական արարողակարգի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով սահմանված դեպքերում՝ ծառայության եզրակացությունը:

2. ԳՈՒՅՔԸ ՆՎԵՐ ՍՏԱՑԱԾ ԱՆՁԻ ԿԱՄ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆԸ ՀԱՆՁՆԵԼԸ

3. Գույքն այն նվեր ստացած պետական մարմնի, հանրային պաշտոն զբաղեցնող անձի կամ հանրային ծառայողի օգտագործմանն է հանձնվում կոմիտեի ղեկավարի որոշմամբ՝ հիմք ընդունելով սույն կարգի N 1 հավելվածի 19-21-րդ կետերի հիման վրա լիազոր մարմնի կողմից տրամադրված մասնագիտական

խորհրդատվությունը և սույն հավելվածի 4-13-րդ կետերով սահմանված մեթոդաբանությունը:

4. Գույքը, որի տնօրինման եղանակի վերաբերյալ «Պետական արարողակարգի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի հիման վրա եզրակացություն է ներկայացրել ծառայությունը, կարող է նվեր ստացած մարմնի, հանրային պաշտոն զբաղեցնող անձի կամ հանրային ծառայողի օգտագործմանը հանձնվել միայն այն դեպքում, երբ ծառայությունը եզրակացություն է ներկայացրել գույքն այդ եղանակով տնօրինելու վերաբերյալ: Եթե ծառայության եզրակացությամբ նշվել է գույքի տնօրինման մեկից ավելի հնարավոր եղանակ, ապա այդ եղանակներից որևէ մեկի ընտրությունը կատարվում է սույն հավելվածի 5-13-րդ կետերի հիման վրա:

5. Հանրային պաշտոն զբաղեցնող անձի, հանրային ծառայողի կամ պետական մարմնի օգտագործմանը չեն կարող հանձնվել՝

1) շուտ փչացող գույքը, կենդանիները, պահպանման էական ծախսեր պահանջող գույքը, մշակութային արժեք համարվող գույքը՝ մարդկային հասարակության կենսագործունեության արգասիք համարվող առարկաները և ստեղծագործությունները, որոնք, անկախ ստեղծման ժամանակից, ունեն հնագիտական, ազգագրական, պատմական, կրոնական, գեղարվեստական, գիտական կարևոր նշանակություն, ինչպես նաև գրավոր հուշարձանները, թանկարժեք մետաղները և թանկարժեք քարերը.

2) պահման առանձնահատուկ պայմաններ պահանջող, խոնավության կամ ջերմաստիճանի որոշակի ռեժիմ պահանջող, դյուրավառ, շրջակա միջավայրին վնաս պատճառող գույքը:

6. Գույքը նվեր ստացած պետական մարմնի օգտագործմանը կարող է հանձնվել պետական կամ պաշտոնական այցերի կամ միջոցառումների, ինչպես նաև աշխատանքային այցերի, գործուղումների շրջանակներում կամ ժամանակ տրվող, ինչպես նաև օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների կամ այլ անձանց կողմից տրվող արարողակարգային այնպիսի նվերը, որը՝

1) քաղաքական, տնտեսական, իրավական, մշակութային, գիտական և նվերն ստացած պետական մարմնի լիազորությունների շրջանակում ներառվող այլ բնագավառներում Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետության, պետական մարմինների, պետական մարմինների և միջազգային կազմակերպությունների միջև կապերի ձևավորման, զարգացման և համագործակցության խորհրդանիշ է.

2) բարեկամական հարաբերությունների, կոնկրետ բնագավառում կամ կոնկրետ հարցի շուրջ ձեռք բերված համաձայնության խորհրդանիշ է.

3) կոնկրետ բնագավառին և նվերն ստացող հանրային պաշտոն զբաղեցնող անձի կամ հանրային ծառայողի կամ պետական մարմնի գործունեությանն առնչվող թեմատիկ խորհրդանիշ է, ինչպիսիք են, օրինակ, հուշանվերները և մասնագիտական գրքերը.

4) ներառում է այդ պետական մարմնի խորհրդանիշի կամ անվան պատկեր, գիր կամ այդ մարմնի հետ նույնականացվող, դրան առնչվող այլ խորհրդանիշ.

5) նվերը տվող անձի կամ օտարերկրյա պետության, միջազգային կազմակերպության գործունեության խորհրդանիշն է կամ նվիրողի համար ունի պատմական, կրոնական, գեղարվեստական, գիտական կարևոր նշանակության խորհուրդ կամ արժեք և առնչվում է այն ստացող հանրային պաշտոն զբաղեցնող անձի կամ հանրային ծառայողի կամ պետական մարմնի գործունեությանը.

6) անմիջականորեն կապված է տվյալ պետական մարմնի գործունեության հետ.

7) տրվել է տվյալ պետական մարմնին կամ այն նվեր ստացած հանրային ծառայողին կամ հանրային պաշտոն զբաղեցնող անձին՝ որպես պարգև, մրցանակ կամ խրախուսանքի այլ միջոց:

7. Հանրային պաշտոն զբաղեցնող անձի կամ հանրային ծառայողի օգտագործմանը կարող է հանձնվել պետական կամ պաշտոնական այցերի կամ միջոցառումների, ինչպես նաև աշխատանքային այցերի, գործուղումների շրջանակներում կամ ժամանակ տրվող, ինչպես նաև օտարերկրյա պետությունների,

միջազգային կազմակերպությունների կամ այլ անձանց կողմից տրվող արարողակարգային այնպիսի նվերը, բացառությամբ սույն հավելվածի 6-րդ կետով սահմանված գույքերի, որը՝

1) անվանական նշագրումով կամ փորագրումով նվեր է կամ անվանապես պատրաստված է նվերն ստացած կոնկրետ հանրային պաշտոն զբաղեցնող անձի կամ հանրային ծառայողի համար.

2) անմիջականորեն կապված է հանրային պաշտոն զբաղեցնող անձի կամ հանրային ծառայողի պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների իրականացման հետ և կարող է ծառայել դրանց արդյունավետ իրականացմանը:

8. Գույքը հանրային պաշտոն զբաղեցնող անձի կամ հանրային ծառայողի կամ պետական մարմնի օգտագործմանը որոշակի ժամկետով կամ համապատասխան պետական մարմնի օգտագործմանը հանձնելու վերաբերյալ որոշման հիման վրա կոմիտեի կողմից գույքը հանձնվում է հանրային պաշտոն զբաղեցնող անձի կամ հանրային ծառայողի կամ պետական մարմնի օգտագործմանը՝ այդ մասին համապատասխան արձանագրություն կազմելով: Գույքը պետական մարմնի կամ հանրային պաշտոն զբաղեցնող անձի կամ հանրային ծառայողի օգտագործմանը հանձնելու մասին կոմիտեի ղեկավարի որոշումը ներառում է՝

1) գույքի անվանումը և տեսակը.

2) պետական մարմնի անվանումը կամ հանրային պաշտոն զբաղեցնող անձի կամ հանրային ծառայողի անունը, պաշտոնը.

3) գույքը հանրային պաշտոն զբաղեցնող անձի կամ հանրային ծառայողի օգտագործմանը հանձնելու դեպքում՝ օգտագործման ժամկետը, եթե այն որոշակի է.

4) գույքն օգտագործման հանձնելու որոշում կայացնելու հիմքերը.

5) գույքն օգտագործման տրամադրելու պայմանները՝ առկայության դեպքում.

6) գույքի պահպանման և խնամքի վերաբերյալ ցուցումներ՝ առկայության դեպքում:

9. Հանրային պաշտոն զբաղեցնող անձին կամ հանրային ծառայողին օգտագործման հանձնված գույքն օգտագործվում է բացառապես տվյալ գույքի նպատակային նշանակությանը, գույքի պահպանման, խնամքի վերաբերյալ տրված

ցուցումներին համապատասխան՝ այնպես, որ բացառվի գույքի օգտագործմամբ դրան վնաս պատճառելը, այն ոչնչացնելը, դրա արժեքի նվազեցումը, բացառությամբ գույքի բնականոն մաշվածության:

10. Պետական մարմնի օգտագործմանը հանձնված գույքն օգտագործվում է պետական մարմնի կամ դրա կառուցվածքային ստորաբաժանումների միջոցով, բացառապես տվյալ գույքի նպատակային նշանակությանը, գույքի պահպանման, խնամքի վերաբերյալ տրված ցուցումներին համապատասխան՝ այնպես, որ բացառվի գույքի օգտագործմամբ դրան վնաս պատճառելը, այն ոչնչացնելը, դրա արժեքի նվազեցումը, բացառությամբ գույքի բնականոն մաշվածության:

11. Պետական մարմնի օգտագործմանը հանձնված գույքը տեղադրվում և օգտագործվում է տվյալ մարմնի հանդիպումների կամ խորհրդակցությունների սրահներում, ցուցադրվում տվյալ մարմնի թանգարանում կամ նվերների ցուցադրության համար առանձնացված՝ անձանց լայն շրջանակի համար հասանելի վայրում կամ այլ կերպ փակցվում (ցուցադրվում) է տվյալ մարմնի վարչական շենքում՝ դրա հանրային տեսանելիությունը կամ ցուցադրությունն ապահովելու տարբերակով:

12. Պետական մարմնի օգտագործմանը հանձնված գույքը, անկախ դրա տեսակից, չի կարող օգտագործվել մարմնի ղեկավարի, այդ մարմնի կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարների կամ այլ հանրային ծառայողների կամ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից միանձնյա կամ տեղակայվել վերջիններիս աշխատասենյակում:

13. Գույքը պետական մարմնի օգտագործմանը հանձնելու եղանակով տնօրինելը նախապատվություն ունի գույքը հրապարակային սակարկություններով իրացնելու և նվիրաբերության եղանակով օտարելու տնօրինման եղանակների նկատմամբ, և բոլոր այն դեպքերում, երբ կոմիտեն կամ ծառայությունը գույքի տնօրինման եղանակն ընտրելիս հավասարապես անհրաժեշտ և հիմնավորված են համարում մի կողմից՝ գույքը պետական մարմնի օգտագործմանը հանձնելը, մյուս կողմից՝ հրապարակային սակարկություններով իրացնելը կամ նվիրաբերելը, նախապատվությունը տրվում է գույքն այն նվեր ստացած պետական մարմնի օգտագործմանը հանձնելուն:

3. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻՆ ՀԱՆՁՆԵԼԸ ԿԱՄ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՎԱՔԱԾՈՒՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼԸ

14. Որպես նվեր ստացված և պետության սեփականությունը դարձած՝ մշակութային արժեք համարվող գույքը՝ մարդկային հասարակության կենսագործունեության արգասիք համարվող առարկաները և ստեղծագործությունները, որոնք, անկախ ստեղծման ժամանակից, ունեն հնագիտական, ազգագրական, պատմական, կրոնական, գեղարվեստական, գիտական կարևոր նշանակություն, ինչպես նաև գրավոր հուշարձանները, պետական կամ համայնքային թանգարաններին հանձնելու կամ ազգային գրադարանային հավաքածուում ընդգրկելու վերաբերյալ հայտը ներկայացվում է կոմիտեի ղեկավարի որոշմամբ՝ հիմք ընդունելով սույն կարգի N 1 հավելվածի հիման վրա, համապատասխանաբար, թանգարանների բնագավառում կամ գրադարանային գործի ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական մարմնի մասնագիտական խորհրդատվությունը և սույն հավելվածի 15-17-րդ կետերով սահմանված մեթոդաբանությունը:

15. Գույքը, որի տնօրինման եղանակի վերաբերյալ «Պետական արարողակարգի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի հիման վրա եզրակացություն է ներկայացրել ծառայությունը, կարող է պետական կամ համայնքային թանգարանին հանձնվել կամ ազգային գրադարանային հավաքածուում ընդգրկվել միայն այն դեպքում, երբ ծառայությունը եզրակացություն է ներկայացրել գույքն այդ եղանակով տնօրինելու վերաբերյալ: Եթե ծառայության եզրակացությամբ նշվել է գույքի տնօրինման մեկից ավելի հնարավոր եղանակ, ապա այդ եղանակներից որևէ մեկի ընտրությունը կատարվում է սույն հավելվածի 16-17-րդ կետերի հիման վրա:

16. Սույն բաժնով սահմանված կարգով պետական թանգարաններին հանձնված գույքը արարողակարգային և աշխատասենյակների ներքին ձևավորման նպատակով՝ տրամադրվում է միայն «Թանգարանների մասին» օրենքի 11-րդ հոդվածով սահմանված մարմիններին՝ նույն հոդվածով սահմանված պայմաններով:

17. Այն դեպքում, երբ «Պետական արարողակարգի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի հիման վրա ծառայության ներկայացված եզրակացությամբ որպես գույքի տնօրինման եղանակ նշվել է այն ազգային գրադարանային հավաքածուում ընդգրկելը, ինչպես նաև այն դեպքերում, երբ գրադարանային գործի ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական մարմնի մասնագիտական խորհրդատվության կամ կոմիտեի դիրքորոշման հիման վրա գույքն անհրաժեշտ է դիտվել ընդգրկել այդ հավաքածուում, ապա կոմիտեի ղեկավարը ոչ ուշ, քան ծառայության եզրակացությունը կամ լիազոր մարմնի խորհրդատվությունն ստանալուն հաջորդող երկրորդ աշխատանքային օրը Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունվարի 10-ի N 19-Ն որոշման հավելվածով սահմանված կարգով հայտ է ներկայացնում Հայաստանի ազգային գրադարան:

4. ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ, ՊԱՀՊԱՆՄԱՆ ԷԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ ՊԱՀԱՆՋՈՂ ԳՈՒՅՔԻ, ՇՈՒՏ ՓՉԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ, ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻ ԵՎ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՔԱՐԵՐԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

18. Սույն բաժնով սահմանվում են առանձին տեսակի գույքերի՝ կենդանիների, շուտ փչացող, պահպանման էական ծախսեր պահանջող գույքի տնօրինման առանձնահատկությունները:

19. Որպես նվեր ստացված կենդանիների, պահպանման էական ծախսեր պահանջող գույքի իրացումը կամ այլ եղանակով տնօրինելն իրականացվում է կոմիտեի ղեկավարի որոշմամբ՝ հիմք ընդունելով սույն որոշման N 1 հավելվածի 19-21-րդ կետերով սահմանված կարգով լիազոր մարմնի կողմից տրամադրված մասնագիտական խորհրդատվությունը, սույն որոշման N 3 հավելվածի կանոնները, ինչպես նաև սույն կարգի 20-23-րդ կետերով սահմանված մեթոդաբանությունը:

20. Սույն որոշման N 4 հավելվածով նախատեսված՝ շուտ փչացող գույքը ենթակա է ոչնչացման սույն որոշման N 3 հավելվածով սահմանված դեպքերում և կարգով:

21. Սույն որոշման N 4 հավելվածի իմաստով պահպանման էական ծախսեր պահանջող գույքը, ինչպես նաև շուտ փչացող գույքը, եթե այն սույն որոշման N 3 հավելվածի հիման վրա ենթակա չէ ոչնչացման, ենթակա է անհապաղ իրացման նվիրաբերության եղանակով, իսկ նվիրաբերության եղանակով իրացման անհնարինության դեպքում՝ հրապարակային սակարկություններով, բացառությամբ այն դեպքերի, երբ ծառայության եզրակացությամբ, իսկ «Պետական արարողակարգի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով նախատեսված նվերներից զատ այլ նվերների դեպքում՝ սույն հավելվածով սահմանված մեթոդաբանությամբ կոմիտեի պատճառաբանված որոշմամբ տվյալ գույքն անհրաժեշտ է տնօրինել սույն հավելվածով սահմանվող այլ եղանակով:

22. Եթե «Հանրային ծառայության մասին» օրենքի 29-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա Հայաստանի Հանրապետության սեփականությունն է դարձել կենդանի, ապա այն, հիմք ընդունելով լիազոր մարմնի մասնագիտական խորհրդատվությունը, իսկ «Պետական արարողակարգի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով նախատեսված նվերների դեպքում՝ ծառայության եզրակացությունը, կարող է հանձնվել նվեր ստացած կամ այլ պետական մարմնին՝ այդ մարմնին ամրացված անշարժ գույքի պահպանության կամ անշարժ գույքին հարակից տարածքում կենդանուն պահելու կամ տվյալ մարմնի գործառույթների իրականացմանն աջակցելու նպատակով:

23. Եթե «Հանրային ծառայության մասին» օրենքի 29-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա Հայաստանի Հանրապետության սեփականությունն է դարձել կենդանի, սակայն այն սույն հավելվածի 21-րդ կետով սահմանված եղանակով տնօրինելն անհնարին է, ապա այն ենթակա է իրացման նվիրաբերության եղանակով, իսկ նվիրաբերության եղանակով իրացման անհնարինության դեպքում՝ հրապարակային սակարկություններով՝ սույն հավելվածի 6-րդ գլխի համաձայն:

24. Եթե «Հանրային ծառայության մասին» օրենքի 29-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա Հայաստանի Հանրապետության սեփականությունն է դարձել թանկարժեք մետաղ կամ թանկարժեք քար, որը «Թանկարժեք մետաղների մասին» օրենքի համատեքստում կարող է ընդգրկվել Հայաստանի Հանրապետության

թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի ազգային պահուստում, ապա կոմիտեի ղեկավարը սույն հավելվածի 15-րդ կետով սահմանված ժամկետում որոշում է կայացնում «Թանկարժեք մետաղների մասին» օրենքով սահմանված կարգով հաշվեգրելու առաջարկով լիազոր մարմին դիմելու մասին: Սույն կետով սահմանված դիմումի հիման վրա գույքը Հայաստանի Հանրապետության թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի ազգային պահուստում ընդգրկվելը լիազոր մարմնի կողմից մերժվելու դեպքում կոմիտեի ղեկավարը յոթ աշխատանքային օրվա ընթացքում կայացնում է գույքը սույն հավելվածի 3-րդ կետի 1-6-րդ ենթակետերով սահմանված եղանակներից որևէ մեկով տնօրինելու վերաբերյալ որոշում՝ հիմք ընդունելով սույն հավելվածով սահմանվող մեթոդաբանությունը:

5. ԳՈՒՅՔԸ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԻՐԱՑՆԵԼԸ

25. Գույքը հրապարակային սակարկություններով իրացվում է, եթե՝

1) կոմիտեի ղեկավարի որոշմամբ, հիմք ընդունելով սույն որոշման N 1 հավելվածի 19-21-րդ կետերի հիման վրա տրված լիազոր մարմնի մասնագիտական խորհրդատվությունը, գույքն անհրաժեշտ է իրացնել հրապարակային սակարկություններով.

2) սույն հավելվածի 21-րդ, 23-րդ, 27-րդ և 28-րդ կետերով նախատեսված դեպքերում:

26. Գույքը, որի տնօրինման եղանակի վերաբերյալ «Պետական արարողակարգի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի հիման վրա եզրակացություն է ներկայացրել ծառայությունը, կարող է հրապարակային սակարկություններով իրացվել միայն այն դեպքում, երբ ծառայությունը եզրակացություն է ներկայացրել գույքն այդ եղանակով տնօրինելու վերաբերյալ: Եթե ծառայության եզրակացությամբ նշվել է գույքի տնօրինման մեկից ավելի հնարավոր եղանակ, ապա այդ եղանակներից որևէ մեկի ընտրությունը կատարվում է սույն հավելվածով գույքի տնօրինման առանձին եղանակների ընտրության մեթոդաբանության հաշվառմամբ:

27. Հրապարակային սակարկություններով է իրացվում «Հանրային ծառայության մասին» օրենքի 29-րդ հոդվածի 9-րդ մասի հիման վրա Հայաստանի Հանրապետության սեփականությունը դարձած և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից սահմանված կարգով հանձնված գույքը, բացառությամբ սույն որոշման N 3 հավելվածով սահմանված՝ ոչնչացման ենթակա գույքի, եթե նվիրաբերության եղանակով այդ գույքը տնօրինելն անհնարին է:

28. Գույքը հրապարակային սակարկությունների եղանակով իրացնելուն նախապատվությունը տալուց առաջ կոմիտեն, ծառայությունը կամ լիազոր մարմինը պարտավոր են գնահատման առարկա դարձնել այն հարցը, թե արդյոք գույքը նվիրաբերության եղանակով իրացնելը համատեղելի է այն նվիրողի և նվեր ստացող պետական մարմնի կամ Հայաստանի Հանրապետության հետ նվիրող երկրի դիվանագիտական, պաշտոնական հարաբերությունների, նվերը տալու հանգամանքների, նպատակների հետ: Բոլոր այն դեպքերում, երբ առկա է ողջամիտ կասկած առ այն, որ «Հանրային ծառայության մասին» օրենքի 29-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված գույքը հրապարակային սակարկություններով իրացնելը կարող է բացասական ազդեցություն ունենալ սույն կետում նշված հարաբերությունների վրա, համապատասխան մարմինը պարտավոր է դիտարկել գույքն այլ եղանակով տնօրինելու հնարավորությունը:

29. Գույքը հրապարակային սակարկություններով իրացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի N 587-Ն որոշման N 1 հավելվածով սահմանված կարգով:

30. Գույքը կոմիտեի կողմից հրապարակային սակարկություններով իրացվում է համապատասխան որոշում կայացնելուց հետո մեկամսյա ժամկետում, բացառությամբ սույն որոշման N 4 հավելվածով սահմանված գույքի, որն իրացվում է ոչ ուշ, քան համապատասխան որոշում կայացնելուց հետո 10-օրյա ժամկետում, եթե լիազոր մարմնի կողմից իրացման համար ավելի սեղմ ժամկետներ չեն առաջարկվել կամ այդ գույքն իր բնույթով իրացման առավել սեղմ ժամկետ չի ենթադրում:

6. ԳՈՒՅՔԸ ՆՎԻՐԱԲԵՐԵԼԸ

31.Գույքը նվիրաբերության եղանակով իրացվում է, եթե՝

1) կոմիտեի ղեկավարի որոշմամբ, հիմք ընդունելով սույն կարգի 19-21-րդ կետերի հիման վրա տրված լիազոր մարմնի մասնագիտական խորհրդատվությունը, գույքն անհրաժեշտ է իրացնել նվիրաբերության եղանակով.

2) սույն հավելվածի 21-րդ, 23-րդ, 32-րդ և 33-րդ կետերով նախատեսված դեպքերում:

32. Գույքը, որի տնօրինման եղանակի վերաբերյալ «Պետական արարողակարգի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի հիման վրա եզրակացություն է ներկայացրել ծառայությունը, կարող է նվիրաբերության եղանակով իրացվել միայն այն դեպքում, երբ ծառայությունը եզրակացություն է ներկայացրել գույքն այդ եղանակով տնօրինելու վերաբերյալ: Եթե ծառայության եզրակացությամբ նշվել է գույքի տնօրինման մեկից ավելի հնարավոր եղանակ, ապա այդ եղանակներից որևէ մեկի ընտրությունը կատարվում է սույն հավելվածով գույքի տնօրինման առանձին եղանակների ընտրության մեթոդաբանության հաշվառմամբ:

33. Նվիրաբերության եղանակով է իրացվում «Հանրային ծառայության մասին» օրենքի 29-րդ հոդվածի 9-րդ մասի հիման վրա Հայաստանի Հանրապետության սեփականությունը դարձած և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից սահմանված կարգով հանձնված գույքը, բացառությամբ այն դեպքերի, երբ նվիրաբերության եղանակով այդ գույքը տնօրինելն անհնարին է: Նվիրաբերության եղանակով չի կարող իրացվել սույն որոշման N 3 հավելվածի հիման վրա ոչնչացման ենթակա համարվող գույքը:

34. Գույքը նվիրաբերության եղանակով իրացնելուն նախապատվությունը տալուց առաջ կոմիտեն, ծառայությունը կամ լիազոր մարմինը պարտավոր են գնահատման առարկա դարձնել այն հարցը, թե արդյոք գույքը նվիրաբերության եղանակով իրացնելը համատեղելի է այն նվիրողի և նվեր ստացող պետական մարմնի կամ Հայաստանի Հանրապետության հետ նվիրող երկրի դիվանագիտական, պաշտոնական հարաբերությունների, նվերը տալու հանգամանքների,

նպատակների հետ: Բոլոր այն դեպքերում, երբ առկա է ողջամիտ կասկած, որ «Հանրային ծառայության մասին» օրենքի 29-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված գույքը նվիրաբերելը կարող է բացասական ազդեցություն ունենալ սույն կետում նշված հարաբերությունների վրա, համապատասխան մարմինը պարտավոր է դիտարկել գույքն այլ եղանակով տնօրինելու հնարավորությունը:

35. Գույքը կոմիտեի կողմից նվիրաբերության եղանակով իրացվում է համապատասխան որոշում կայացնելուց հետո մեկամսյա ժամկետում, բացառությամբ սույն որոշման N 3 հավելվածով սահմանված գույքի, որը նվիրաբերվում է ոչ ուշ, քան համապատասխան որոշում կայացնելուց հետո 10-օրյա ժամկետում, եթե լիազոր մարմնի կողմից իրացման համար ավելի սեղմ ժամկետներ չեն առաջարկվել կամ այդ գույքն իր բնույթով իրացման առավել սեղմ ժամկետ չի ենթադրում:

7. «ՊԵՏԱԿԱՆ ԱՐԱՐՈՂԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

36. «Պետական արարողակարգի մասին» 17-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետով սահմանված դեպքերում ծառայությունն ստացված նվերը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից սահմանված կարգով և ժամկետներում հաշվառում է նվերների հաշվառման ռեեստրում:

37. Գույքի տնօրինման վերաբերյալ եզրակացություն ներկայացնելու վերաբերյալ կոմիտեի գրությունն ստանալուց հետո անհապաղ, բայց ոչ ուշ, քան գրությունն ստանալու հաջորդ օրը ծառայությունը սույն որոշման N 1 հավելվածի 22-րդ կետով սահմանված գրություն է ուղարկում գույքը նվեր ստացած մարմնի գլխավոր քարտուղարին կամ այլ հավասարազոր պաշտոնատար անձին, իսկ անհրաժեշտության դեպքում՝ գույքի տնօրինման եղանակի վերաբերյալ եզրակացություն կազմելու համար ծառայությունը սույն որոշման N 1 հավելվածով սահմանված կարգով դիմում է սույն որոշման 4-րդ կետով սահմանված՝ տվյալ գույքի առնչությամբ լիազոր մարմնին՝ գույքի տնօրինման եղանակի վերաբերյալ եզրակացություն կազմելու նպատակով մասնագիտական խորհրդատվություն ստանալու համար:

38. Լիազոր մարմինը, ստանալով դիմումը, ոչ ուշ, քան երկու աշխատանքային օրվա ընթացքում, ներկայացնում է մասնագիտական խորհրդատվություն՝ սույն որոշման N 1 հավելվածի 19-21-րդ կետերով սահմանված կարգով:

39. Սույն որոշման N 1 հավելվածի 22-րդ կետով սահմանված գրության հիման վրա նվերն ստացած պետական մարմնի գլխավոր քարտուղարը կամ այլ հավասարազոր պաշտոնատար անձն իր առաջարկությունը ներկայացնում է ոչ ուշ, քան համապատասխան գրությունն ստանալուն հաջորդող աշխատանքային օրը:

40. Ստանալով գույքի տնօրինման եղանակի վերաբերյալ մասնագիտական խորհրդատվությունը և սույն հավելվածի 39-րդ կետում նշված առաջարկությունը՝ ծառայությունը ոչ ուշ, քան դրանք ստացվելուց հետո երկրորդ աշխատանքային օրը կայացնում է եզրակացություն՝ գույքի տնօրինման եղանակի վերաբերյալ՝ ըստ N 1 ձևի՝ այն անհապաղ ներկայացնելով կոմիտե՝ եզրակացությամբ առաջարկվող եղանակով գույքը տնօրինելու նպատակով որոշում կայացնելու և դրա կատարումն ապահովելու համար:

41. Գույքի տնօրինման եղանակի վերաբերյալ եզրակացություն ներկայացնելու նպատակով ծառայությունն իրավունք ունի մինչ սույն հավելվածի 38-րդ հոդվածով սահմանված ժամկետի ավարտը գույքն ուսումնասիրել դրա գտնվելու վայրում, իսկ կոմիտեն կամ գույքը պահպանության ընդունած պետական մարմինը պարտավոր են ապահովել ծառայության աշխատակիցների հասանելիությունը գույքին՝ դրա գտնվելու վայրում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

25.06.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ